Ազդարարության Փող

Trumpet's Sound

48-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՏՐԱԼԻԱ
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Որովհետև այսօր ձեզ համար...» . . . . . Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Արդյոք աճո՞ւմ ես (1) . . . . . Ռեքս Տիրլավ

Բարի՞ գործեր. . . . . Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Հրեշտակները և հովիվները . . . . . Դոն Սթորմըր

Հնազանդության դասը. . . . . Քաղված

Հովհաննեսի նամակները (1) . . . . . QMBC պանորամա

Փոփոխվող աշխարհ. . . . . Դոկտ. Չեսլո Բասսարա

Մեծ խորհուրդը. . . . . Հովիվ՝ Հապիպ Ալաճաճի

Տերն իմ Հովիվն է. . . . . Հովիվ՝ Սամուել Տոքթորյան

Վարպետ ժամագործը . . . . . Քաղված

Քրիստոնյաներին համայն աշխարհի . . . . . Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

«Որովհետև այսօր ձեզ համար Փրկիչ ծնվեց Դավթի քաղաքում, որը՝ Քրիստոս Տերն է»:

Ղուկաս 2:11

Դարձյալ սուրբծննդյան շրջանն է: Աշխարհը նշում է Սուրբ Ծնունդը տարբեր ձևերով ու գույներով՝ եղևնիներ, լույսեր, հրուշակեղեններ, արձակուրդ, գնումներ, կերակուրներ, Ձմեռ պապ...: Տոնակատարության իրական պատճառը մոտավորապես 2000 տարի առաջ տեղի ունեցած մանկան ծնունդն է. Աստված մանուկի կերպարանք առավ և մսուրի մեջ դրվեց: Սա սովորական պատմություն չէ, այլ ԱՍՏԾՈ հրաշքը:

Երբևէ այս հարցը տվե՞լ ես. «Ինչո՞ւ, Տե՛ր»: Ինչո՞ւ Աստված մանուկի կերպարանք առավ, ինչո՞ւ Իր թագավորությունը թողնելով աշխարհ եկավ, ինչո՞ւ չարչարվեց ու մահացավ: Պատասխանը պարզ է. աշխարհը Փրկչի կարիք ուներ, և Տեր Հիսուսը եկավ՝ փրկելու համար: Նրա միակ նպատակը մարդկությունը փրկելն էր, քեզ և ինձ փրկելն էր, բայց ինչի՞ց պիտի փրկեր: «Քանի որ բոլորը մեղանչեցին և Աստծո փառքից զրկվեցին»: Բոլորս կարիք ունենք մեր մեղքերից ու մեղավոր բնությունից ազատագրվելու, քանի որ հանցավոր ենք Նրա Օրենքը խախտելու մեջ: Մեզանից ոչ ոք չի կարողանա Նրա առջև կանգնել ու ասել. «Ես մեղք չգործեցի»: «Որովհետև մեղքի վարձը մահ է», բայց Քրիստոսը խաչի վրա վճարեց գինը: «Հետևաբար, հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են...»:

Սուրբ Ծնունդը նշանակում է, որ Քրիստոսը ծնվեց: Քրիստոսը ծընվեց նշանակում է Փրկիչ տրվեց: Դու Փրկչի կարիք ունե՞ս. եկ Հիսուսին, քանի որ փրկության դուռը դեռևս բաց է քեզ համար: Հիսուսը տակավին փրկում է և ներում բոլոր նրանց, ովքեր գալիս են Իրեն: Այս սուրբծննդյան տոնին արդյոք կգա՞ս Հիսուսին:

Այո՛, մենք շարունակելու ենք տոնել Սուրբ Ծնունդը մինչև Նրա փառավոր գալուստը, քանի որ ավելի մեծ ուրախություն չկա, քան իմանալը, որ մեր մեղքերը ներված են:

Արդյոք աճո՞ւմ ես (1)

Բ Պետրոս 1:1-15

Այս հատվածի խոսքերը ծեր մարդու արտաբերած խոսքեր են, ով գիտի, որ շուտով մահանալու է: Ի՞նչը կարող էր այդքան կարևոր նյութ հանդիսանալ Պետրոսի համար, ով Սուրբ Հոգու օգնությամբ պատրաստվում էր խոսք ներկայացնել իր ընթերցողների ուշադրությանը: Պետրոսի համար եզրափակիչ մի պատգամ կար, որը, հուսով էր, որ հիշվելու էր, նույնիսկ իր մահից հետո: Պետրոսը կարող էր իր կյանքի վրա անդրադարձ կատարել՝ որպես Գալիլիա ծովում աշխատող համառ ձկնորսի:

- Գալիլիա ծովի ափին իր առաջին հանդիպումը Հիսուսի հետ:
- Այդ փոթորկի վախը:
- Այլակերպության հիանալի հրաշքը:
- Գիշերը, երբ ուրացավ Հիսուսին և իր մասին սարսափելի բացահայտում արեց՝ պարզելով, որ այնքան էլ ուժեղ չէ, որքան կարծում էր:
- Վաղ առավոտը, երբ Հովհաննեսից առաջ անցնելով՝ հասավ դատարկ գերեզման:
- Պենտեկոստեի հիանալի օրը, երբ քարոզեց և տեսավ, թե ինչպես հազարավոր մարդիկ Քրիստոսին եկան:
- Վաղ եկեղեցու տարածումը:

Աստծո հետ քայլելու իր կյանքի ընթացքում իր տեսած ու փորձառած բոլոր բաներից առավել ի՞նչն էր ընտրելու որպես ամենակարևոր և վերջնական պատգամ: Այստեղ Պետրոսը հոգևոր աճի մասին է խոսում: Հոգևոր աճը ինչ-որ կերպով նման է ֆիզիկական աճին:

Երբևէ նկատե՞լ եք, թե փոքրիկները որքան են փափագում շուտ մեծանալ: Երբ փոքր էի, ինձ թվում էր, թե մեծանալը խոր փոփոխությունների, նոր ազատության և իշխանության դուռ է, որի մասին կարող էի միայն երազել: Պետրոսը ճիշտ այդպես է ուզում, որ մենք գնա-

հատենք հոգևոր աճը: Այն խոր փոփոխությունների, նոր ազատության և իշխանության դուռ է: Հոգևոր աճը մեզ ասում է. «Կա ավելին և այն ավելի լավ է»: Հսկայական տարբերություն կա Աստծո մասին իմանալու և Աստծուն ճանաչելու միջև: Ինչ-որ մեկը գալիս է և մեզ պատմում է Աստծո մասին: Այսպիսով, մենք իմանում ենք Աստծո մասին: Սակայն իրականության մեջ Աստծուն ճանաչում ենք այն ժամանակ, երբ մեր ունեցած այդ գիտելիքի հիման վրա սկսում ենք դրականորեն արձագանքել: Առաջին համարում ապացույց կա, որ Պետրոսն Աստծուն ճանաչելու շնորհիվ մեծապես փոխվել է: Նա ասում է, որ հավատքը պատվական է:

Սա անհավատալի փոփոխություն է Պետրոսի կյանքում: Նա իր կյանքը սկսել էր որպես ազգայնական: Մանկությունից ի վեր սովորել էր, որ հրեաներն ավելի բարձր են, քան մյուս մարդիկ և թե իրականում միակ ցեղն են, որով Աստված շատ հետաքրքրված է: Քրիստոսի ժամանակ սովորաբար ընդունված էր, որ ռաբբին ժողովրդին սովորեցներ, որ եթե պատը մարդկանց վրա փլվի, ապա պետք է այնքան փլատակ հեռացնել, որ հնարավոր լինի պարզել՝ արդյոք տուժածները հրեա՞ են, թե՞ ոչ: Եթե հրեա չէին, կարելի էր նրանց այնտեղ թողնել:

Նույնիսկ Պենտեկոստեի օրը՝ Սուրբ Հոգով լցվելուց հետո, Պետրոսը դժվարությամբ էր ընդունում այն միտքը, որ Աստված կարող է սիրել և փրկել հեթանոսին: Գործք Առաքելոց գրքում Աստված Պետրոսին հատուկ տեսիլք տվեց՝ ցույց տալու, որ Նա հեթանոսներին նույնպես սիրում է: Պետրոսը չէր ուզում Ավետարանը քարոզել նրանց: Իր նախապաշարումների պատճառով Պետրոսի համար նույնիսկ դժվար էր ճաշել հեթանոս քրիստոնյաների հետ: Մի անգամ նա ստիպված էր այդպես անել, սակայն միայն այն ժամանակ, երբ վստահ էր, որ շուրջը հրեաներ չկային: Պողոսը խստորեն հանդիմանեց նրան. սրա մասին կարդում ենք Գաղ. 2:11-ում: Բայց տեսեք, թե Պետրոսն ինչպես աճեց: Նույնիսկ հեթանոսներին ասաց. «Ձեր հավատքը նույնքան պատվական է, որքան իմը»:

Աճն ընդգրկում է հիմնական փոփոխություն ոչ միայն մեր վարքագրծում, այլև ամենախոր մակարդակով մեր բարդույթների ու նախապաշարումների մեջ: Նման փոփոխությունը ակնհայտ է դառնում ի-

րական հոգևոր աճի շնորհիվ, որը գալիս է Քրիստոսին ճշմարտապես ճանաչելու միջոցով: Ի՞նչն է հանդիսանում նման աճի պատճառը. «Իր աստվածային զորության համաձայն մեզ պարգևեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքին ու աստվածապաշտությանը՝ Նրան գիտենալու միջոցով, որ մեզ կանչել է փառքի ու առաքինության. որոնցով մեզ են տրված ամենամեծ ու թանկագին խոստումները» (3-4-րդ համար): Աստված արդեն տվել է մեզ այն ամենը, ինչի կարիքն ունենք Իրեն ավելի նմանվելու համար: Աստված մեզ զորություն է պարգևել աճելու համար, որպեսզի հաղորդակից լինենք աստվածային բնույթին և փախչենք ապականությունից:

Այստեղ է, որ հոգևոր աճը տարբերվում է ֆիզիկական աճից: Յուրաքանչյուր անձ, ով ապրում է որոշակի տարիներ, մանկությունից մինչև հասունություն աճի փորձառություն է ունենում: Մի՛ խաբվեք՝ մտածելով, թե պարզապես որոշակի տարիներ ապրելն օգնում է ձեզ հոգևորապես աճելու: Հնարավոր է՝ ֆիզիկապես ծեր լինել, բայց հոգևորապես դեռևս մանուկ մնալ: Պետրոսը, ծեր մարդ լինելով, դեռևս խոսում էր աճելու և սովորելու մասին: Աճելը և սովորելը ձեր ներքին կյանքը երիտասարդ պահելու գրավականն են: Ծեր մարդու իմ սահմանումը ոչ թե շատ տարիներ ապրող անձն է, այլ այն անձը, ով դադարել է աճելուց և սովորելուց: Ցավալի է այն քրիստոնյայի վիճակը, ով աճելու ձգտում չունի, ով ապրում է անցյալի օրհնություններով առանց ակնկալելու ապագայի որևէ օրհնություն:

Ռեքս Տիրլավ

Քաղված՝ «Իսկապե՞ս Աստված բարի է» գրքից

(Շարունակելի)

«Դեպի Քեզ եմ բարձրացնում աչքերս, ո՛վ Երկնքում Բնակվող: Ահա, ինչպես ծառաների աչքերն են նայում իրենց տիրոջ ձեռքին, ու ինչպես աղախնու աչքերը՝ տիրուհու ձեռքին, այնպես էլ մեր աչքերը Տիրոջը՝ մեր Աստծուն են նայելու՝ մինչև մեզ ողորմի»:

ՍԱՂՄՈՍ 123:1-2

Բարի՞ գործեր

Հակոբոս 2:14-26, Տիտոս 3

Փրկություն ստանալու, Աստծուն հաճեցնելու մեթոդի և գնի հետ կապված հարցերը դարձել են վիճահարույց և սխալ ընկալվող թեմաներ. մենք փրկվում ենք մեր բարի գործերո՞վ, թե՞ Աստծո շնորհով: Կան մարդիկ, ովքեր հավատում և ուսուցանում են, որ միայն բարի գործերով է հնարավոր փրկվել ու խաղաղություն գտնել: Ոմանք էլ հավատում և սովորեցնում են, որ փրկությունը միայն Աստծո շնորհով է, և բարի գործերը դրա հետ կապ չունեն: Շատ կրոնական խմբեր թե՛ քրիստոնեական աշխարհի ներսում, թե՛ դրսում, սխալ են հասկանում կամ անտեսում են Աստծո շնորհը: Ա Պետ. 5.10-ում Պողոսն ասում է. «Բոլոր շնորհների Աստվածը»:

Նրանք հարում են այն գաղափարին, որ մարդը կարող է արդարանալ ու փրկվել միայն բարի գործերով, այսինքն՝ գին վճարելով: Այլ կերպ ասած՝ դա նույնն է, ինչ սրտի հիվանդություն ունեցող մարդը սրտի փոխպատվաստման համար վեր կենա և հնարավորինս լավ աշխատի: Կան մարդիկ, ովքեր գիտակցելով, որ հնարավոր չէ միայն գործերով արդարանալ, ընդունել են, որ փրկությունը հնարավոր է միայն հավատով՝ Աստծո շնորհն ընդունելով:

«Որովհետև շնորհով եք փրկված՝ հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է, ոչ թե գործերից, որ ոչ մեկը չպարծենա» (Եփես. 2.8-9):

Այս երկրորդ խմբին պատկանող մարդիկ ի՞նչ վերաբերմունք ունեն բարի գործերի մասին: Նրանք մյուս ծայրահեղության մեջ են ընկել: Նրանք ասում են, որ գործերը ոչ մի կապ չունեն փրկության հետ:

Ինձ հաճախ են հարցրել. «Ի՞նչ կասեք գործերի մասին, չե՞ք կարծում, որ քրիստոնյաները պետք է բարի գործեր կատարեն»: Պատասխանս միշտ շատ որոշակի է եղել. «Այո՛, մենք պետք է բարի գործեր կատարենք»: Հակոբոսի և Տիտոսի (2-րդ և 3-րդ գլուխներ) ուղերձների հիմնական շեշտադրումը բարի գործերն են, բայց ոչ որպես փրկության միջոց:

Քանի որ մենք փրկվում ենք Աստծո ողորմությամբ (Տիտ. 3:5) և արդարանում Նրա շնորհով (Տիտ. 3:7), ուստի պարտավոր ենք «բարի գործերի մեջ նախանձախնդիր» լինել (Տիտ. 2:14), «բարի գործերի օրինակ հանդիսանալ» (Տիտ. 2:7), «բարի գործերի մեջ հավատարիմ լինել» (Ա Տիմ. 3:8,14), «բարի գործերի մեջ հարստանալ» (Ա Տիմ. 6:8), «ամեն բարի գործի մեջ պտղաբեր լինել» (Կող. 1:10) և «ամեն բարի գործի համար» (Բ Տիմ. 2:21), «մեկը մյուսին բարեգործության մղել» (Եբր. 10:24):

Շնորհով փրկվելը և հետո բարի գործեր չանելը նման է այն մարդուն, որի սիրտը պատվաստում են, բայց հետո նա մեռած մարդու է նման:

«Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի պահեցեք, որ ինչ բանով որ ձեզ չարագործների պես բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառավորեն Աստծուն այցելության օրում» (Ա Պետ. 2:12):

«Այսպես լուսավորի ձեր լույսը մարդկանց առաջ, որ ձեր բարի գործերը տեսնեն և փառավորեն ձեր Հորը, որ Երկնքում է» (Մատթ. 5:16):

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

«Լսի՛ր իմ աղաղակը, ո՛վ Աստված, ուշադրությո՛ւն դարձրու իմ աղոթքին: Երկրի ծայրից քեզ եմ կանչելու, երբ սիրտս ընկճված է. առաջնորդի՛ր ինձ դեպի այն վեմը, որ ինձնից բարձր է: Քանի որ Դու ինձ ապաստան եղար, մի ամուր աշտարակ՝ թշնամու դեմ: Ես Քո խորանի մեջ եմ բնակվելու հավիտյան.Քո թեւերի ծածկույթի տակ եմ պատսպարվելու: (Սելա) Քանի որ դու, Ո՛վ Աստված, լսեցիր իմ ուխտերը, Քո անունից վախեցողների ժառանգությունն ինձ տվիր: Դու երկարացնելու ես թագավորի կյանքը. նրա տարիները՝ սերնդե սերունդ: Նա հավիտյան Աստծո առջեւ է լինելու. օ՜, ողորմություն ու ճշմարտություն պատրաստիր, որ պահպանեն նրան: Այսպես փառաբանություն եմ երգելու Քո անվանը հավիտյան, որպեսզի ամեն օր ուխտերս կատարեմ»:

Սաղմոս 61

Հրեշտակները և հովիվները

Ղուկաս 2:8-21

Հիսուսի ծնունդը տեղի ունեցավ ոչ միայն շատ համեստ հանգամանքներում, այլև Նրա՝ որպես փրկող Թագավորի ծնունդի մասին հայտարարությունը բոլորովին տարբերվում էր մեր ակնկալածից: Նրա ծննդյան հայտարարությունն ուղղված էր հովիվներին, ոչ թե կառավարական, կրոնական և հասարակական առաջնորդներին:

Ի՞նչն է այս ամենի նշանակությունը: Ժամանակակից հուդայականության մեջ հովիվները հասարակության ամենահետին տեղը զբաղեցնող մարդկանցից էին: Հետին խավի առաջին հորիզոնականում մաքսավորներն էին, հետո անբարոները (քաղաքավարի ասած՝ «մեղավորները»), իսկ հովիվները երրորդ հորիզոնականի վրա էին գտնվում: Նրանց թույլ չէին տալիս տաճար մտնել, հավանաբար իրենց հոտի պատճառով, որ ունեին աշխատանքի բերմամբ: Այնուամենայնիվ, Տեր Հիսուսը, ով ապագայում նույնպես պիտի արհամարհվեր ու մերժվեր հասարակության կողմից, աշխարհ եկավ արհամարհված մարդկանց համար: Սա հիշեցնում է Մարիամի երգի ճշմարտությունը. «Սովածներին բարիքներով լիացրեց, իսկ հարուստներին՝ ձեռնունայն ճանապարհեց»: Աշխարհայինները մարդկանց արժևորելու իրենց դասակարգերն ունեն, սակայն Աստված չի հավանում հպարտներին, ովքեր չեն խոնարհվում Իր առջև:

Զաքարիան և Մարիամը սարսափեցին կամ անհանգստացան, երբ տեսան հրեշտակին: Նույնը զգացին հովիվները: Կարող ենք պատկերացնել նրանց զարհուրանքը, երբ գիշերային երկինքը լուսավորվեց, և հրեշտակը կանգնեց նրանց առջև: Ինչևէ, հրեշտակն ուներ քաջալերանքի նույն պատգամը. «Մի՛ վախեցեք»: Պատճառն այն էր, որ այդ օրը Դավթի քաղաքում Փրկիչն էր ծնվել:

Որո՞նք են հովիվներին ուղղված հրեշտակի պատգամի կարևոր կետերը: Առաջին՝ նրա պատգամը բարի լուր էր կամ Ավետարան. Փրկիչ ծնվեց, ով Քրիստոս Տերն է: Հրեշտակը երեք ճշմարտություն ընդգծեց. փոքրիկը Փրկիչն է. Նա մարդկանց պիտի փրկի իրենց մեղքերից, Նա

Քրիստոսն է կամ խոստացյալ Մեսիան՝ Աստծո Օծյալը, Նա Տեր է, Աստված է:

Երբ հրեշտակն իր պատգամն ավարտեց, հրեշտակների մեծ բազմություն միացավ նրան՝ Աստծուն փառավորելու համար: «Բարձունքներում Աստծուն փառք և երկրի վրա խաղաղություն, մարդկանց մեջ՝ հաճություն»: Ժամանակակից որոշ թարգմանություններ առաջարկում են, որ այս հատվածն այսպես գրվի. «Մարդկանց մեջ հաճություն, որոնց վրա Նրա բարեհաճությունն է հանգչում»: Այնուամենայնիվ, հին բառերը պահպանելու լավ պատճառ կա: Քրիստոսի գալուստը միջոց էր, որով Աստծո բարեհաճությունը հանգչելու էր նրանց վրա, ովքեր կընտրեին այս Փրկչին հավատալը: Մի օր երկրի վրա խաղաղություն է լինելու, և բարձունքներում փառք է տրվելու Աստծուն:

Հովիվներն իմացան նաև Նրա ծնունդի համեստ հանգամանքները: Արդյոք նրանք զարմացա՞ն իրենց տրված հայտարարության կապակցությամբ: Երբ ասվեց, թե Նրան մսուրում կգտնեն, արդյոք նրանք հարցրի՞ն, թե ինչու է Նա ախոռում ծնվել: Ինչո՞ւ Քրիստոսը չծնվեց հասարակության ավելի բարձր խավում: Մենք կարող ենք հարցնել՝ արդյոք Հիսուսի համար ավելի լա՞վ կլիներ, եթե Նա պալատում ծընվեր: Ո՛չ: Ախոռում ծնվելը մատնանշում է Հիսուս Քրիստոսի կատարած քայլի մեծությունը: Նա, ով հարուստ էր, աղքատացավ: Քանի որ Նա այսքան աղքատացավ, ուստի հասկանում է մարդկության բոլոր կարիքներն ու հանգամանքները և կարող է հոգալ բոլորի մասին:

Հրեշտակի պատգամը լսելուց հետո հովիվները որոշեցին Բեթլեհեմ գնալ: Հրեշտակը խոսել էր Դավթի քաղաքի մասին, ոչ թե Բեթլեհեմի: Սակայն հովիվներին կարիք չկար ասելու, որ այդ քաղաքը Բեթլեհեմն է:

Հովիվները մանուկին տեսան և երկու բան արեցին: Առաջին՝ նրանք տարածեցին իրենց լսած և տեսած պատմությունը: Երկրորդ՝ նրանք Աստծուն փառք տվեցին իրենց լսածի և տեսածի համար, որովհետև այն, ինչ տեղի ունեցավ, ճիշտ այն էր, ինչ հրեշտակն ասել էր իրենց:

Մեզ կարող է հետաքրքրել, թե արդյո՞ք մարդիկ նրանց պատմածներին ուշադրություն դարձրին. չէ՞ որ հովիվներն ընկերների նեղ շրջա-

նակ ունեին: Այնուամենայնիվ, նրանք կարողացան շատերին պատմել լուրը, և մարդիկ, հովիվների պատմածները լսելով, շատ զարմացան:

Հարցը, որ պետք է ինքներս մեզ տանք, հետևյալն է՝«Աստված ո՞ւմ հետ է խոսում»: Մենք պետք է գիտակցենք, որ Աստված չի գործում այս օրերի հասարակական արժեհամակարգի համաձայն: Հովիվներն արհամարհված էին տաճարի առաջնորդների կողմից, բայց նրանք ստացան Փրկչի գալուստի պատգամը: Նա, անշուշտ, Իր Անձը չհայտնեց այդ օրերի կրոնական և քաղաքական առաջնորդներին: Այսօր էլ նույնն է: Ովքեր սրտով խոնարհ են, Փրկիչը նրանց հայտնում է խաղաղության և բարեհաճության Իր պատգամը:

Մենք պատրա՞ստ ենք Աստծո ձայնը լսելու: Նախ՝ պետք է Աստծո առաջ գիտակցենք մեր ոչնչությունը, հետո հասկանանք, որ Աստված խոսում է խոնարհների հետ: Նա Իր Խոսքն ուղղում է նրանց, ովքեր փափագում են լսել Իրեն:

Դոն Սթորմը

Հնազանդության դասը

Մի մարդ քնած էր, երբ հանկարծ լույս ծագեց սենյակում, և Աստված հայտնվեց: Տերը մարդուն ասաց, որ նրա համար գործ ունի, և ցույց տվեց տան առջև գտնվող մեծ ժայռը: Տերը բացատրեց, որ ուզում է՝ մարդը ժայռը հրի իր ամբողջ ուժով:

Ուստի մարդը ամեն օր դա էր անում: Տարիներ աշխատեց արևածագից մինչև երեկո՝ ուսերը ամուր զանգվածին տված՝ ամբողջ ուժով հրում էր անշարժ ժայռը:

Ամեն գիշեր մարդը ուժասպառ տուն էր վերադառնում ցավերով և զգում էր, որ օրը իզուր էր անցել: Մինչ նա հուսահատության նշաններ էր ցույց տալիս, սատանան սկսեց կասկածներ դնել նրա հոգնած մտքի մեջ. սա հակառակորդի լավագույն գործելակերպն է. «Երկար ժամանակ է, ինչ հրում ես այս ժայռը, և այն տեղից չի շարժվում:

Ին-չո՞ւ ես ինքդ քեզ չարչարում դրա համար: Սա քո գործը չէ. մի քիչ հրի՛ր և բավականացի՛ր»:

Հոգնած մարդը որոշեց այդպես անել, սակայն նախ ուզեց իր ծանրացած խորհուրդները աղոթքով Աստծուն հայտնել:

- Տե՛ր իմ, - ասաց նա, - երկար ժամանակ է, ինչ ամբողջ ուժով աշխատում եմ Քո՝ ինձ ասած գործն անել, սակայն մինչև հիմա ոչ մի սանտիմետրով ժայռը չի շարժվել: Ո՞րն է սխալը, ինչո՞ւ եմ ձախողվում:

Տերը կարեկցությամբ պատասխանեց.

- Որդի՛ս, երբ քեզ առաջարկեցի, որ Ինձ ծառայես, դու ընդունեցիր: Քեզ ասացի, որ քո գործն է ամբողջ ուժով ժայռը հրելը, և այդպես արեցիր: Երբեք քեզ չեմ հանձնարարել, որ վերցնես այն: Քո գործը հրելն էր: Հիմա ուժասպառ Ինձ մոտ ես եկել և կարծում ես, թե ձախողվել ես: Բայց այդպես չէ: Նայի՛ր ինքդ քեզ: Բազուկներդ զորացել են մկաններով, կռնակդ փայլուն է և ողորկ, ձեռքերդ հարատև ճնշումից կոշտացել են, իսկ սրունքներդ զորացել են և պնդացել: Դիմադրությամբ դու շատ մեծացար, և կարողություններդ գերազանցեցին նախկինում ունեցածիդ: Ճիշտ է՝ ժայռը չշարժեցիր, բայց քո կոչումը հնազանդ լինել և հրել էր՝ հավատքդ գործածելով և Իմ իմաստությանը վստահելով: Դա արեցիր, որդի՛ս, հիմա Ես եմ ժայռը վերցնելու:

Հաճախ երբ Աստված մեզ բան է ասում, որ անենք, փորձում ենք մեր տրամաբանությամբ բացատրել այն, մինչդեռ Աստծո ուզածը պարզ հնազանդություն է և հավատք Իր հանդեպ:

Ամեն գնով փորձենք լեռներ շարժող հավատք ունենալ, սակայն հստակ իմանանք, որ Աստված է դրանք շարժողը:

«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք. «Տեղափոխվի՛ր այստեղից՝ այնտեղ». և այն կտեղափոխվի, և ոչինչ անհնարին չի լինի ձեզ համար» (Մատթ. 17:20):

Քաղված՝ ՌիթԱրամ Դավիթյանի
«Բարեպտուղ ձիթենին» գրքից

Հովհաննեսի նամակները (1)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հովհաննեսի երեք նամակները գրվել են Եբրայեցիներին ուղղված նամակից մոտավորապես քսան տարի անց, և դրանք համապատասխանաբար ուղղված էին Աստծո զավակներին, ընտրյալ տիկնոջն ու նրա որդիներին և Գայոսին: Հուդա և Բ Պետրոս նամակների նման Հովհաննեսը նույնպես գրեց քրիստոնյաներին կեղծ ուսուցիչներից նախազգուշացնելու նպատակով: Բայց կա մեկ այլ նպատակ, որի համար Հովհաննեսը գրեց իր առաջին նամակը. «Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որպեսզի իմանաք, որ դուք հավիտենական կյանք ունեք, և որպեսզի հավատաք Աստծո Որդու անվանը» (Ա Հովհ. 5:13):

Հովհաննեսի երկրորդ և երրորդ նամակներն անձնական բնույթ են կրում, դրանք հասցեագրված են հատուկ անձանց: Հայտնի չէ, թե ով է ընտրյալ տիկինը, սակայն ընդհանուրի կողմից ընդունված է այն, որ Գայոսը նույն անձն է, որի մասին կարդում ենք Հռոմ. 16:23-ում և Ա Կորնթ. 1:14-ում: Երկու նամակներում էլ հիշատակվում են սերը, ճըշմարտությունը, խաղաղությունն ու ուրախությունը: Հովհաննեսի 2-րդ նամակը զգուշացնում է մոլորեցնողներից և հակաքրիստոսից, մինչդեռ 3-րդ նամակը խոսում է Դեմետրեոսի մասին, որը սիրում էր առաջնորդությունը, հրաժարվում էր առաքյալների հետ հաղորդակցությունից և եղբայրներին ընդունելուց՝ նրանց հեռացնելով եկեղեցուց:

2. Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ (մ.թ. 90)

Այս նամակում շատ բան կա գրված ընդդեմ Գնոստիկների չար ուսմունքի: Գնոստիկները հակառակվում էին առաքյալներին և նրանց ուսմունքին: Մենք ավելի լավ կգնահատենք այս նամակը, եթե որոշ պատկերացում կազմենք Գնոստիկների ուսմունքի հիմնական կետերի մասին:

Այս չար ուսմունքը կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

1. Որոշ մարդիկ պնդում էին ճշմարտության վերաբերյալ հատուկ գիտելիքներ ունենալը: Սովորական քրիստոնյաները չունեին այս հատուկ գիտելիքները:
2. Նյութեղեն բոլոր բաները նկատվում էին որպես չարիք և դրա աղբյուրը:
3. Մարդու հոգին համարվում էր բարի, իսկ մարմինը՝ չարիք, քանի որ նյութեղեն է:
4. Հին կտակարանի՝ ստեղծագործության, մեղքի և մարդու վիճակին վերաբերող ուսմունքները խեղաթյուրված էին և համապատասխանեցված իրենց չար ուսմունքին:
5. Գնոստիկների ճյուղավորումներից մեկը մերժում էր այն փաստը, որ Հիսուսը նյութեղեն մարմին ուներ: Նրանք պնդում էին, որ թվում էր, թե Նա մարմին ուներ:
6. Գնոստիկների մեկ այլ ճյուղավորում ընդունում էր, որ Հիսուսը մարդ էր, որն Իր մկրտության ժամանակ ստացավ «Քրիստոսի զորություն»-ը, և այն Իր հետ մնաց մինչև Նրա դատապարտության պահը: Այսպիսով, ըստ իրենց՝ խաչի վրա մահացողը սովորական մարդ էր (հմմտ. Մատթ. 1:23, Բ Կորնթ. 5:19, Հովհ. 1:1, 14):
7. Գնոստիկները հավատում էին, որ կարող էին հասնել Աստծո մոտ իրենց սեփական գիտելիքներով (հմմտ. Հովհ. 14:6):

Գնոստիկների ամենավտանգավոր սխալը կենտրոնացած էր Տեր Հիսուսի աստվածության և մարդեղության վրա: Այսպիսով, իր առաջին նամակում, Հովհաննեսը շատ բան ունի ասելու այդ ճշմարտությունների վերաբերյալ: (Տե՛ս Ա Հովհ. 2:22, 4:2-3, 15 և 5:1, 5):

2.1 ՆԱԽԱԲԱՆ (1:1-4)

Հովհաննեսն իր խոսքը սկսում է՝ շեշտելով, որ ինքը և մյուս առաքյալներն անձամբ տեսան Տեր Հիսուսին, լսեցին և շոշափեցին Նրան: Դա տեղի է ունեցել այս նամակը գրելուց վաթսուն տարի առաջ: Սակայն դրա հիշատակն իրական և վառ էր, նույնիսկ այդքան ժամանակ

անցնելուց հետո: Նա հայտարարում է, որ այս մարդը սկզբից էր, և Կենաց Բանն էր՝Հոր Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Եվ Նա հավիտենական կյանքն էր, որը Հորից էր: Հովհաննեսն ուզում էր, որ իր ունկընդիրները նույն ուժեղ հավատն ունենան Հիսուսի հանդեպ, որ առաքյալներն ունեին և նրանց հետ կիսեցին այն հաղորդությունը, որ ունեցել էին Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ: Այսպիսով, նրանց ուրախությունը կատարյալ կլինի (Ա Հովհ. 1:1-4): Նման նախաբանը պետք է լռեցներ չար ուսուցիչներին և ամրապնդեր քրիստոնյաների հավատը:

2.2 ՔԱՅԼԵԼ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ (1:5 – 2:17)

Հովհաննեսը ճշմարիտ հաղորդության հիմքը՝ Տեր Հիսուսի մասին ճիշտ ըմբռնումն ու գնահատումը հաստատելուց հետո մեզ տալիս է այդ հաղորդությունը պահպանելու պայմանները: «Աստված լույս է, ու Նրա մեջ ամենևին խավար չկա» (Ա Հովհ. 1:5): Սա մեզ ասում է, որ Աստված սուրբ է, արդար և մաքուր: Եթե քայլում ենք լույսի մեջ, մենք ունենք միմյանց հետ հաղորդակցություն: Եթե մեղք գործենք (քրիստոնյաներս ժամանակ առ ժամանակ մեղք գործում ենք), մեր հաղորդակցությունն Աստծո և Նրա ժողովրդի հետ խափանվում է, բայց մենք կարող ենք վերականգնել այն՝ մեր մեղքերը Տիրոջը խոստովանելով, քանի որ Նրա արյունը մաքրում է մեզ բոլոր մեղքերից (Ա Հովհ. 1:7): Պետք է նշել, որ երբ անձն ապաշխարության և հավատի միջոցով քրիստոնյա է դառնում, նա միանգամից և ընդմիշտ ազատվում է իր մեղքերի պատժից, և նրան զորություն է տրվում հաղթանակի կյանք ապրելու Քրիստոսում: Սակայն եթե նա մեղք գործի, ապա խոստովանությամբ այդ հաղորդակցությունը կարող է վերականգնվել:

Այնուհետև սովորում ենք, որ եթե Աստծո զավակներից որևէ մեկը մեղք գործի, Տեր Հիսուսն անձամբ խոսում է Հորը՝ ի պաշտպանություն մեզ, այսինքն՝ Նա աղերսում է մեզ համար կամ բարեխոսում Հորը: Դա տեղի է ունենում այն պահին, երբ մեղք ենք գործում: Նրա նպատակն այն է, որ մեզ ապաշխարության և խոստովանության առաջնորդի, որպեսզի հաղորդակցությունը կարողանա վերականգնվել: Որքա՜ն սքանչելի է գիտակցել, որ Քրիստոսի քավչարար զոհաբե-

րությունը Գողգոթայում ապահովում է մեր բոլոր կարիքները և կշարունակի այդպես անել մինչև այս աշխարհի վերջը: Հովհաննեսն ավելացնում է՝ ասելով, որ Քրիստոսի զոհաբերությունը լիովին բավարար է ամբողջ աշխարհի մեղքերը քավելու համար: Այնքա՜ն մեծ է Նրա զոհաբերությունը: Իհարկե, միայն նրանք, ովքեր գալիս են Նրան ճշմարիտ ապաշխարությամբ և հավատով, կփրկվեն:

Ճշմարիտ քրիստոնյայի երկու նշանները հնազանդությունն ու սերն են: Քրիստոնյայի հնազանդության առնչությամբ Հովհաննեսը գրում է. «Եվ սրա՛նով գիտենք, թե ճանաչում ենք Նրան (Տեր Հիսուսին), եթե պահենք Նրա պատվիրանները: Բայց ով պահում է Նրա Խոսքը, իսկապես նրա մեջ կատարյալ է Աստծո սերը. ու սրանով ենք իմանում, թե Նրա մեջ ենք» (Ա Հովհ. 2:3, 5): Քրիստոնյայի սիրո առնչությամբ Հովհաննեսը գրում է. «Նա, ով սիրում է իր եղբորը, լույսի մեջ է բնակվում, և նրա մեջ գայթակղության պատճառ չկա» (Ա Հովհ. 2:10): Գնոստիկները չէին հնազանդվում Տիրոջ պատվիրանին, և հստակ է, որ չէին սիրում առաքյալներին, ուստի Հովհաննեսը նրանց կոչում է ստախոսներ, ովքեր ճշմարտություն չունեն և դեռ խավարի մեջ են. «Իսկ նա, ով ատում է իր եղբորը, խավարի մեջ է և խավարի մեջ է քայլում ու չգիտի, թե ուր է գնում, որովհետև այդ խավարը կուրացրել է նրա աչքերը» (Ա Հովհ. 2:11):

Հովհաննեսը գրում է Աստծո ժողովրդին (ներառելով հավատի մեջ չափահասներին և երիտասարդներին)՝ հիշեցնելով նրանց որոշ օրհնությունների մասին, որոնք ունեն Տիրոջով: Նրանց մեղքերը ներվել են, հայրերը ճանաչում են Նրան, ով սկզբից էր, և երիտասարդները հաղթել են չարին աստվածային զորությամբ և նրանց մեջ ապրող Աստծո Խոսքով (Ա Հովհ. 2:12-14):

(Շարունակելի)

Translated from QMBC Panorama of the Bible Course with permission. QMBC Inc.
Թարգմանված է QMBC Աստվածաշնի պանորամա դասընթացի թույլտվությամբ:
QMBC Inc.

Փոփոխվող աշխարհ

Անխորդ հարյուրամյակների ընթացքում բազում փոփոխություններ են տեղի ունեցել: Փոփոխությունն այնքան սրընթաց է, որ հազիվ հասցնում ենք աչք թարթել, և փոփոխության հերթական ալիքն է հարվածում մեզ: Ամեն օր, քսանչորս ժամ մարդիկ շարունակ գալիս ու գնում են: Փոփոխությունը մեր կյանքի մշտական ուղեկիցն է:

Վերջին 30 տարիների ընթացքում ավելի շատ ինֆորմացիա է առաջացել քան նախորդ 5,000 տարիների ընթացքում: Այսօր խանութի ապրանքատեսականու 90%-ը գոյություն չուներ տաս տարի առաջ: Հաշվվում է, որ քոլեջի շրջանավարտների 50%-ը ընդունվում է այնպիսի աշխատանքների, որ գոյություն չունեին նրանց ծնվելու ժամանակ:

Մի մարդ այսպես է ձևակերպել.

«Մեծ պապս ձի էր քշում, բայց վախենում էր գնացքից: Պապս գնացքով էր երթևեկում, բայց վախենում էր մեքենայից: Հայրս մեքենա էր վարում, բայց վախենում էր ինքնաթիռից: Ես ինքնաթիռ եմ նստում, բայց վախենում եմ ձիուց»:

Փոխհարաբերությունները փոխվում են: Ամուսնությունների 50%-ը այսօր ավարտվում է ամուսնալուծությամբ: Եվ հավանականություն կա, որ երբ զույգը ոտք է դնում ամուսնական շեմին, նրանց ընտանիքը յոթ տարուց ավել չի տևի: Մեր հասարակությունը հեռացել է փոխհարաբերությունների Աստծո օրենքից:

Մեր անփոփոխ Աստված

Պետք է հիշենք, որ Աստված դեռ վերահսկում է և երբեք չի փոխվում: Աստված վերահսկում է: Նա երբեք չի շեղվում դեպքերի ընթացքից, երբեք չի շփոթվում, միշտ ճիշտ որոշում է կայացնում: Նա միշտ գիտի, թե ինչ է անելու, նույնիսկ մինչև հանգամանքների ծագելը: Աշխարհի սանձերն Աստծո ձեռքերում են, և Նրա նպատակները կիրագործվեն:

Աստվածաշունչը խոսում է այս հարափոփոխ աշխարհում մեր անփոփոխ Աստծո մասին. «Որովհետև Ես Տերս, չեմ փոփոխվի» (Մաղաքիա 3:6):

Մաղաքիային այս խոսքերն ասվեցին մեծ փոփոխության ժամանակաշրջանում. պաշտամունքը դարձել էր մակերեսային, քանզի մարդիկ իրենց «մնացորդներն» էին տալիս Աստծուն:

Աստծո բարոյական օրենքն անտեսվում էր, հատկապես ամուսնության հարցում:

Ամուսնալուծությունն ազգային պատուհաս էր:

Տասանորդ վճարելու Աստծո պատվիրանն անարգվում էր ի տնտեսական անբարենպաստություն ազգի: Ո՛չ քահանաները, ո՛չ մարդիկ լուրջ չէին ընդունում ահագնացող դատաստանը: Այդպիսի աշխարհում Աստված հիշեցնում ու զգուշացնում էր Իր ժողովրդին, որ Ինքը չի փոխվել:

Մենք պետք է նորոգենք մեր տեսիլքը

Մենք պետք է խանդավառ ու հստակ տեսիլք ունենանք այն մասին, ինչ Աստված մեզ կանչել է անելու և ինչպիսին որ պետք է լինենք: Ինչ-որ մեկն ասել է. «Եթե մեր հուշերն ավելի շատ են, քան երազանքները, կյանքն ավարտվել է»: Մենք պետք է իմանանք, թե ուր ենք գնում և ինչ ենք անելու:

Աստված Եսայիին ասաց. «Առաջիններն մի՛ հիշեք. և հին բաները մի՛ մտաբերեք: Ահա ես նոր բան եմ անում» (Եսայի 43:18-19):

Աստված նոր գաղափարների, նորարարության Աստված է: Նա փոփոխություն իրագործող Աստված է: Պետք է աղոթենք նոր տեսիլքի համար: Մենք պետք է փափագենք այն, ինչ Աստված կարող է անել:

Եթե ուզում եմ տխրել, ապա ընդամենը պետք է ինքս իմ մեջ նայեմ: Եթե ուզում եմ հաղթվել, ընդամենը պետք է ետ նայեմ: Եթե ուզում եմ շեղվել, ընդամենը պետք է շուրջս նայեմ: Եթե ուզում եմ տագնապել, ընդամենը պետք է առաջ նայեմ: Եթե ուզում եմ փրկվել, ինձ պետք է վեր նայել: Միայն այն ժամանակ, երբ ուշադրությունս հառեմ Տիրո-

ջը, արգելքները կվերածվեն հնարավորությունների, իսկ պատնեշները՝ օրհնությունների:

Դասեր, որ կարող ենք քաղել Մովսեսից.

«Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, Անտեսանելուն տեսնողի պես համբերեց» (Եբր. 11:27):

Մովսեսի աչքերն Աստծուն էին նայում, և նա համբերեց: Մովսեսն աննկուն ուժ ուներ՝ հակառակ բոլոր փոփոխությունների: Նա հայացքն Աստծուն էր դարձրել, ոչ թե խոչընդոտներին: Նա համբերում էր՝ չնայած Փարավոնի անարգանքին: Նա տանում էր եբրայեցիների համառությունը, որոնք տրտնջում էին, գանգատվում ու ընդվզում իր դեմ: Նա դիմանում էր իր սիրելիների՝ Մարիամի՝ քրոջ, Ահարոնի՝ եղբոր, և ընկերների՝ Դաթանի ու Աբիրոնի քննադատություններին: Նա կարողանում էր դա անել, որովհետև հայացքն ուղղել էր Տիրոջը, և երբեք ետ չէր նայում:

Մենք եւս կարող ենք փոխել աշխարհը

Երբ թվում է, թե հակառակորդը բարգավաճում է, երբ չարը կարծես հաղթանակում է, երբ ճնշումը ահագնանում է, երբ քննադատներն ավելի ու ավելի ակտիվանում են, երբ զգում ենք, որ մեն-մենակ ենք, երբ սխալը թագավորում է, իսկ ճշմարտությունը գոյամարտ մղում... ինչի էլ բախվենք, մեզ հարկավոր է նայել Տեր Հիսուսին: Փոփոխությունը Նրա հետ է գալիս:

Աստված դեռևս օգտագործում է Իրեն լիովին նվիրված սովորական մարդկանց անկայուն աշխարհում փոփոխություն մտցնելու համար:

Կյանքը հուզառատ է դառնում, երբ ամեն բան Աստծուն ենք տալիս: Եվ երբ այդ անենք, Աստված մեզ կտանի հեռուներ, որ մեր կարծիքով երբեք չէինք կարող գնալ, անել բաներ, որ մեր կարծիքով երբեք չէինք կարող անել Իր հավիտենական փառքի համար:

Դոկտ. Չեսլով Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Մեծ խորհուրդը

Ա Տիմոթեոս 3:16

Յուրաքանչյուր տարի հունվարի 6-ին կամ դեկտ. 25-ին իրար ողջունում ենք՝ ասելով. «Քրիստոս ծնվեց և հայտնվեց»: Հիսուսի ծնունդի մեջ հայտնության խորհուրդը կա: Աստված Հիսուսի ծնունդով հայտնվեց: Նա Ինքն իրեն տարբեր կերպերով հայտնել է բնության, մարդու խղճի, ազգերի պատմության, Իր Խոսքի՝ Աստվածաշունչի մեջ: Իսկ ամենակարևոր հայտնությունը Քրիստոսով է եղել: Այսօր խոսելու ենք բնության և Նրա Խոսքի միջոցով հայտնվելու մասին:

Աստված Ինքն իրեն հայտնել է բնության մեջ: Սաղմոսերգիչը փառաբանում է Աստծուն Նրա մատների գործերի համար. «Երկինքները հայտարարում են Աստծո փառքը»: Այս տիեզերքի, երկրի ստեղծումը մեր գիտությունից ու հասկանալու կարողությունից շատ ավելի վեր է, սակայն դժբախտությունն այն է, որ Աստված թեպետ բնության մեջ խոսում է մարդու հետ և Ինքն իրեն հայտնում է նրան, այդուհանդերձ մարդու մեղքով բթացած, խավարած սիրտն ու հոգին Աստծուն չի կարողանում տեսնել Նրա ձեռքերի գործերում: Առաքյալը Եփես. 4-րդ գլխում նկարագրում է մեղավորի միտքը, որ կուրացած է մեղքով, հոգին, սիրտը չեն տեսնում, թմրած են: Միայն նրան, ով ուզում է իմանալ ու տեսնել, Աստված հայտնում է Ինքն իրեն: Երկու օրինակ կա այս ուղղությամբ:

Տարիներ առաջ ամերիկացիները և ռուսները սկսեցին տիեզերք գընալ: Ռուսաստանի կողմից աստղագետ գնաց մի քանի անգամ և ճամփորդություններից մեկի ժամանակ, երբ կապ էր հաստատել Երկրի հետ, ասաց. «Աստծո մասին լսել էի, երկրի վրա Նրան չտեսա, երկինք եկա, այնտեղ էլ Նա չկա: Որտե՞ղ է մարդկանց ասած Աստվածը»: Համայն աշխարհը լսեց այս ծանուցումը:

Դրանից քիչ ժամանակ անց Ամերիկայից մի հավատացյալ մեկնեց տիեզերք՝ իր հետ վերցնելով Աստվածաշունչը, և ասաց. «Աստծո մասին երկրի վրա լսել էի ականջով, գիտեի, բայց երբ երկինք եկա, աչքերովս տեսա, ձեռքերովս շոշափեցի Նրան»: Նա նաև կարդաց Սաղ-

մոսաց Գրքից, և համայն աշխարհը լսեց: Ի՜նչ մեծ տարբերություն. նա, ով ուզում է տեսնել, տեսնում է, բայց նա, ով իր աչքերը փակել է և տեսնել ու համոզվել չի ուզում, չի տեսնում: Այսօրվա մեղավոր մարդկությունը նույնն է անում՝ աչքերը փակում է՝ Նրա գործը չտեսնելու համար:

Ահա՛ երկրորդ օրինակը: Երբ Հիսուսը ծնվեց, Բեթլեհեմի վրա մի աստղ երևաց: Միայն մոգերը եկան՝ Հիսուսին փնտրելու և այդ աստղի հայտնած լույսին ու ճշմարտությանը հետևելու: Մի՞թե այդ ժամանակ արևելքում աստղագետներ, երկնքի երեսը տեսնողներ չկային: Անշուշտ կային. ուրեմն ինչո՞ւ այս մոգերից բացի ուրիշները չեկան: Ի՞նչն էր պատճառը: Եկողների հոգիներն արթուն էին, նրանց աչքերը բաց էին. նրանք բնության մեջ տեսան Աստծուն, իմացան, ճանաչեցին, եկան և ասացին. «Ո՞ւր է այն Թագավորը, որ ծնվել է»: Իմաստունները տակավին փնտրում են Նրան: Իմաստուն է այն մարդը, ով փնտրում է ծնված Թագավորին: Խելացի է այն անձը, ով ասում է. «Ես ծնված Քրիստոսի կարիքն ունեմ: Որտե՞ղ է Նա»:

Աստված Ինքն իրեն հայտնում է նաև Իր Խոսքով: Նա երկու տեսակի Խոսք ունի: Մեկը Կենաց Խոսքն է՝ Հիսուս Քրիստոսը, մյուսը՝ գրավոր Խոսքը՝ Աստվածաշունչը: Աստվածաշնչի էջերը լի են Քրիստոսով: Ծննդոցի առաջին գլխից մինչև Հայտնության վերջին գլուխը Հիսուսը ներկա է: Անհավատները, անաստվածները, Աստվածաշունչը քննադատել, հանցանք ու սխալ գտնել ուզողները ի՞նչ են գտել, ո՞ւմ են գտել դրա էջերում. միայն Տիրոջն են գտել, միայն Տեր Հիսուսին են գտել, որ Աստծո հայտնությունն է:

Ուզո՞ւմ ես Աստծուն տեսնել, կարդա՛ Նրա Խոսքը: Ուզո՞ւմ ես Աստծո ձայնը լսել, կարդա՛ Նրա Խոսքը: Ուզո՞ւմ ես Աստծո ներկայությունը վայելել, կարդա՛ Նրա Խոսքը: Տեսնո՞ւմ ես, թե որքա՜ն թանկագին է, որքա՜ն սիրելի է, որքա՜ն քաղցր է:

Միգուցե դու բնության մարդ չես, բայց քիչ թե շատ կարդալ գիտես: Աստծո Խոսքում գտե՞լ ես Աստծուն: Ամեն առավոտ Աստծո Խոսքը բացելով՝ տեսնո՞ւմ ես Նրան այնտեղ: Երբեմն մեր տներում ալբոմներ ենք նայում, մեզ ծանոթ դեմքերը մեր աչքերի առջև են գալիս և նորոգվում են մեր սրտերում ու մտքերում: Երբ ամեն առավոտ Աստվածա-

շունչը բացես՝ կարդալու, կարո՞ղ ես տեսնել Տիրոջը: Նա Ինքն իրեն հայտնո՞ւմ է քեզ, նորոգո՞ւմ է քեզ: Եթե մինչև հիմա այդպես չէիր մոտեցել Աստծո Խոսքին, սրանից հետո փորձի՛ր, աղոթի՛ր, որ Տերն ամեն օրվա Իր Խոսքի էջում Ինքն իրեն հայտնի քեզ:

Վեր.՝ Հապիպ Ալաճաճի

Տերն իմ Հովիվն է

Սաղմոս 23

Ամենանշելի սաղմոս է Սաղմոս 23-ը: Եթե սերտենք միայն առաջին համարի առաջին նախադասությունը՝ «Տերն իմ հովիվն է», կարող ենք երեք անգամ կրկնել՝ յուրաքանչյուր անգամ շեշտը մեկ բառի վրա դնելով:

ՏԵՐՆ իմ հովիվն է: Ո՞վ է իմ հովիվը՝ Տերը, հզոր Աստված: Ուրիշ գլուխներում նույնպես կարդում ենք. «Տերն իմ ամրոցն է, փրկությունն է, լույսն է, զորությունն է, պաշտպանն է»: Ի՜նչ սքանչելի է այսպիսի Տեր ունենալը և «Տերն իմ հովիվն է» ասելը:

Տերն **ԻՄ** հովիվն է: Յուրաքանչյուրս պետք է որ այդ անձնական փորձառությունն ունենա Տիրոջ հետ: Երբ կարողանաս ասել այդ նախադասությունը, ուրեմն քո և Տիրոջդ միջև հարաբերություն, կապ է ստեղծվել և անձնականի վերածելով՝ կարող ես ասել. «Տերն ԻՄ հովիվն է»:

Տերն իմ **ՀՈՎԻՎՆ** է: Այդ հովիվը երբեք չի թողնի մեզ: Հովհ. 10:11-ը ասում է, որ հովիվը կյանքն իր ոչխարների համար կտա: Երբ քնելու դժվարություն եմ ունեցել, պատահել է, որ մտքով սլացել եմ հովիվների դաշտը՝ Բեթլեհեմ, ուր մի քարայր կա, և փորձել եմ դաշտի ոչխարներին մեկիկ առ մեկիկ քարայր մտցնել, մինչև քնելս: Իսկ երբ արթնացել եմ խորհուրդներով, փառաբանություն եմ սկսել և շատ չանցած՝ քնել եմ:

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում մի հսկայական եկեղեցի կա, որի գավթում ամեն տարի նոր գրություն է դրվում: Երբ գնացի, հետևյալն էր գրված. «Իմաստունները, մոգերը Հիսուսի մոտ եկան և տակավին հեռու են մնում»: Ուրիշ տարի հետևյալն էր գրված. «Դժվարություն ունե՞ս քնելու, ոչխար մի՛ հաշվիր, հովվի հետ խոսի՛ր»: Երբ դու կարողանաս ասել՝ Տերն իմ հովիվն է, իրականության մեջ կկարողանաս քաջ կերպով ասել՝ ես ոչ մի բանի կարոտություն չեմ ունենա: Հովիվը սիրում է քեզ, խնամում է քեզ, պաշտպանում է, հայթայթում է քո կարիքները, դժվարությունների դեմ Ինքն է կանգնում: Հովիվը կանգնում է քո թիկունքին ու պաշտպանում քեզ, եթե բան է պատահում, ու վիրավորվում ես, գրկում է քեզ, երբ պատահի, որ կորչես, հովիվը կփնտրի քեզ, մինչև գտնի: Այսպիսի օրհնյալ Տեր, հովիվ ունենալը մեծ հարստություն է:

44 տարի հովվական առաքելությանս և քարոզչությանս ընթացքում հավատացած եմ, որ Տերն իմ կարիքները միշտ հոգալու է. Նա երբեք չի լքել ինձ:

Տարիներ առաջ նյութական նեղության միջով էի անցնում: Տղաս՝ Փոլը, մանուկ էր, կողակիցս՝ Նոյեմին, շաբաթ օրը դրամ ուզեց, որ կիրակի օրվա համար գնումներ կատարի և տղայիս համար կաթ գնի: Ասացի.

- Նոյեմի՛, դրամ չկա, բայց կարող ենք աղոթել և ծոմ պահել:

Մի կարևոր այցելություն ունեի և որովհետև կիրակի օրվա համար հինգ քարոզ պետք է պատրաստեի, Նոյեմիին խնդրեցի, որ նա հանձն առնի այդ այցելությունը: Այդ պահին մի քույր եկավ, որ Եգիպտոսից Լիբանան էր եկել՝ ինձ այցելելու: Նա մոտեցավ Փոլի անկողնուն ու նրա բարձի տակ ինչ-որ բան դրեց: Գնալուց հետո բարձի տակից մի ծրար հանեցի՝ մեջը գումար կար, որ մեր մեկ ամսվա կարիքները կարող էր հոգալ: Երբ Նոյեմին վերադարձավ, բացականչեցի.

- Տերը հայթայթեց:

Հիմա երբ խորհում եմ ու ետ նայում, ասում եմ. «Ո՛վ Տեր, ի՞նչ սքանչելի ես, հայթայթող ու կարիքները լրացնող»: Երբ հավատքով ես ապրում, իսկապես կարող ես ասել՝ Տերն է իմ Հովիվը: Նա քո կարիքները

լիուլի կլրացնի: Չկա որևէ բան, որ Նա չգիտի. Տերը մեր բոլոր կարիքները գիտի և հավատարիմ է՝ ամենօրյա մեր կարիքները հոգալու: Տերը, որ քո Հովիվն է, առաջնորդում է քեզ, սովորեցնում է, ցույց է տալիս քո ճամփան, քեզ հետ է լինում, երբեք քեզ չի լքում: Դու Նրա ձեռքում ես: Որքան փառք տաս, քիչ է:

Նա գիտի, թե որտեղ են խոտավետ արոտները, այնտեղ է առաջնորդում քեզ, տանում է քեզ դեպի հանդարտ ջրերը, որ ծարավդ հագեցնես, ամեն օր նորոգում է հոգիդ, առաջնորդում է քեզ արդարության մեջ Իր անվան համար:

Թեև մահվան շուքի ձորում էլ լինեմ, չարից չեմ վախենա, քանի որ կարող եմ ասել. «Տերն իմ հովիվն է»: Նրա ցուպն ու գավազանը մխիթարում են ինձ, երբեմն նաև ծեծում են, բայց մխիթարություն է: Թող Տերն Իր գավազանը ինձ վրա գործադրի, որովհետև Նրա գավազանն օրհնություն է ոչ միայն ծեծելու, այլև առաջնորդելու:

Նա սեղան է պատրաստում իմ առջև թշնամիներիս դիմաց: Հակառակորդները շատ են, ամեն տեսակ փոթորիկներ են գալու, բայց երբ կարողանաս ասել՝ Տերն իմ հովիվն է, Նա թշնամիների առջև քեզ համար սեղան կպատրաստի: Նա իմ գլուխը յուղով է օծում: Տիրոջը միշտ այսպես եմ աղոթել. «Ինչ ուզում ես վերցրո՛ւ ինձանից, ինչ կուզես, կտամ, միայն օծությունը մի՛ վերցրու ինձանից»: Օծությունից բացի ուրիշ բանի կարիք չունես: Նա իմ գլուխը յուղով է օծում, բաժակս շատ լիքն է: Երբ Տերն է քո Հովիվը, բաժակդ միշտ լիքն է:

Իսկապես բարերարությունը ու ողորմությունը ինձ հետ են գալու: Որքա՞ն՝ կյանքիս բոլոր օրերում: Այսպիսի Տերը, հովիվը բնակարան ունի, քեզ տանելու է այնտեղ, որտեղ Ինքն է ապրում, քեզ տանելու է Իր մոտ, ու հավիտյանս հավիտենից Նրա հետ ես լինելու:

Վեր.՝ Սամուել Տոքթորյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

❋ ❋ ❋

Վարպետ ժամագործը

Տարիներ առաջ Եվրոպայի մի փոքր գյուղաքաղաքի բնակիչները որոշեցին ժամացույց ունենալ կենտրոնական հրապարակի վրա, որի զանգը ամբողջ շրջանին լսելի լիներ: Ուստի գյուղացիներն անվանի վարպետ ժամագործ վարձեցին հեռավոր մի քաղաքից, որ այս ժամացույցը պատրաստի: Այս արհեստավորն այնպիսի հիանալի ժամացույց պատրաստեց, որի երաժշտությունը լսվում էր ամեն ժամ, և արձանիկները պարում էին եղանակի համեմատ:

Սակայն մինչ տարիներն անցան, ժամացույցը սկսեց փչանալ, և մի օր էլ դադարեց աշխատելուց: Ոչ ոք չգիտեր այն նորոգելու ձևը: Տըխրություն պատեց ամբողջ գյուղաքաղաքին: Ապա քաղաքապետը գաղափար ունեցավ՝ թերևս կարողանան գտնել ժամագործին, որի ձեռքի գործն էր այս վաղեմի գլուխգործոցը:

Եվ գտան մարդուն, որ հիմա ճերմակ մազերով կորացած ծերունի էր: Նա ավելի քան քսան էր, ինչ չէր կատարում այդ գործը, սակայն համաձայնեց ետ գալ գյուղաքաղաք և փորձել նորոգել իր ստեղծագործած ժամացույցը: Բնակիչներն օգնեցին տկարակազմ վարպետին, որ մտնի ժամացույցի ներքին սրահը և սպասեցին դուրսը՝ հուսալով, որ նրան կհաջողվի նորոգել այն: Անցավ մեկ ժամ, երկու, և հանկարծ ժամացույցը սկսեց աշխատել, հովտում հնչեց երաժշտությունը, և արձանիկները սկսեցին պարել: Ամեն մարդ շատ ուրախ էր:

Այս պատմությունը բոլորիս է վերաբերում, մինչ թևակոխում ենք Նոր տարին, երբ հարցեր ու դժվարություններ կունենանք առաջիկա օրերի և ամիսների ընթացքում: Անկասկած կլինեն այդպիսի պարագաներ: Ուստի այս պատմությունը կօգնի, որ դիմենք մեր Ստեղծիչին, ով կարող է օգնել մեզ՝ դրանք լուծելու:

Ինչպես միայն ժամագործը կարողացավ իր հնարած ժամացույցը նորոգել, նույնպես էլ մեր Արարիչը՝ Աստված, որ մեզ ամեն կողմից գիտի, կարող է մեր ընթացքը շտկել, որպեսզի կարողանանք ուրախությամբ ապրել Նրա շնորհքով ու Նրա փառքի համար:

«Տե՛ր, չգիտենք՝ ապագան ինչ է վերապահել մեզ, բայց գիտենք, որ Դու գիտես և դա քաջալերում է մեզ»:

«Օ՜, Աստծո իմաստության և գիտության անհուն հարստություն, ի՜նչ անգննելի են Նրա դատաստանները, և անհայտնաբերելի՝ Նրա ճամփաները» (Հռոմ. 11:33):

Քաղված՝ ՌիթԱրամ Դավիթյանի
«Բարեպտուղ ձիթենին» գրքից

Քրիստոնյաներին համայն աշխարհի

1. Ավետարանիչ Ղուկասի գրքում
Ճշմարտությունով ու կարգով գրված,
Հերթականությամբ յոթերորդ գլխում
Այսպիսի դեպք կա նկարագրված:

2. Ասում է՝ Նային կոչվող քաղաքից
Դուրս էին բերում մի որբևայրու,
Մեռած մինուճար որդուն կողակից,
Եվ սուգը մեծ էր սևասիրտ այրու:

3. Ու սրտաճմլիկ ողբը թշվառ մոր
Հուզել էր խոշոր թափորը մահվան,
Անտարբեր չէին նույնիսկ սար ու ձոր՝
Տեսնելու թախիծն դառն ու դաժան:

4. Այս պատմությունը լավ ավարտ ունի՝
Ի պատիվ ու փառք մեր Տեր Հիսուսի:
Դժվարամարս է, ով հավատք չունի,
Հարության լուրը՝ հրաշքն այսպիսի:

5. Կորնթացիներին գրված նամակում
Առաքյալներից Պողոսը հանճարեղ
Զարմանում է ու հանդիմանում՝
Բաժանումներն անիմաստ, տգեղ:

6. Ես Պողոսյան եմ կամ Ապողոսյան,
Իսկ ես՝ Քրիստոսյան, ժառանգորդ գահի
Ես Կեփասյան, ես Փիլիպոսյան
Դե՛ արի սրանց դու միտքդ պահի:

7. Ու այս ցուցակը առանձին ճառով
Չափից դուրս մեծ է, քան ես թվեցի:
Կփորձեմ պատմել, թե ինչ պատճառով
Նային քաղաքից Կորնթոս չվեցի:

8. Պատկերացնում եմ այն թշվառ այրուն՝
Հանդիպած ոչ թե Որդու հետ Աստծո,
Այլ Կեփասյաններն են մխիթարում,
Կամ մյուսները՝ խոսքերով կծու:

9. Մեկը՝ թե, մայրի՛կ, շատ դարդ մի՛ անի,
Տղադ ետ կգա աշխարհքի վերջին,
Դու գլխավորը՝ շաբաթը պահի
Ու տասանորդ բեր մի փոքր, չնչին:

10. Մյուսը հանդուգն, չափից դուրս գոռոզ,
Խոսում է գրքից ու Տիրոջ վախեն,
ու մեջ է բերում Մատթևոս, Մարկոս,
Թե մեռելները թող որդուդ թաղեն:

11. Հաջորդը՝ հպարտ իր գիտությունով,
Թշվառ մայրիկին հարցում է անում,

Թե փրկվո՞ւմ ենք մկրտությունով,
Կամ ո՞րն է Աստծո գլխավոր անունը:

12. Մեկն էլ ասում է՝ առանց նոր լեզվի
Չես կարող լինել դու մեր նման սուրբ,
Իսկ որդուդ համար դու շատ մի նեղվիր,
Արի՛, հետևի՛ր մեր ուսմունքին նուրբ:

13. Մխիթարիչներից ձանձրալի, շինծու,
Հոր նահապետը հոգնեց, գանգատվեց.
Ի՞նչ երջանիկ էր այն կինն նայինցի,
Որ իր ողբի մեջ Տիրոջը հանդիպեց:

14. Քրիստոնյանե՛ր, համայն աշխարհքի,
Թո՛ղ Աստված պահի ձեր զավակներին,
Կարոտ չէ մեռելը ոչ մի ուսմունքի,
Հերի՛ք է գովեք ձեր բանակներին:

15. Մեռած որդիքը նայինցի կնոջ
Նախ պետք է Աստծուց նոր կյանք ստանան,
Արյամբ մաքրվեն մեր Փրկիչ Տիրոջ,
Վերքերով Նրա, որ առողջանան:

16. Ուստի, երբ որ դուք հանդիպեք հանկարծ,
Նայինցի կնոջ մեռած բալեքին,
Իսկ նրանք շատ են, եղեք աչքաբաց,
Տիրոջ մոտ բերեք նրանց ամենքին:

Գառնիկ Աբրեյան
«Պոեմս Դու ես ՀԻՍՈՒՍ» գրքից